

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԵՏԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԿՈՒՏԱՅ ԻՍՐԱՅԷԼԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Զորքշաքթի, Հոկտեմբեր 31-ին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամեմ. Տ. Թորգոմ Արքեպս. Մամուկեան պաշտօնական այցելութիւն տուաւ Իսրայէլի Նախագահ Հայիմ Զէրցօ-կիմ: Այս պետական այցելութիւնը կը կատարուէր Ամեմ. Սրբազան Պատրիարք Հօր Գահա-կալութեան արարողութեմէն չորս օրեր ետք:

Սոյն այցելութեան ըմբացքին, Պատրիարք Հօր կ'ըմկերակցէին մորըմտիր Լուսարա-րապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեանը եւ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ զանազան Թեմերու Առաջնորդները:

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէմ Ա.ի մերկայացուցիչ՝ Գերշ. Տ. Ներսէս Արքեպս. Պօղապալեանը Իսրայէլի Կառավարութեան շնորհակալութիւն յայտնեց այն առաջնահերթ օգնութեան համար՝ որ Իսրայէլի կառավարութիւնը ցուցաբերեց 7 Դեկտ. 1988ի երկրա-շարժի աղէտի ըմբացքին:

Ներկայ էին Գերշ. Տ. Յակոբ Եպս. Վարդանեան՝ Մարսիլիոյ մէջ Կաթողիկոսական Պատուիրակի փոխամորդ, Գերշ. Տ. Տիրայր Արքեպս. Մարտիկեան, Առաջնորդ Հայց. Առա-քելական Եկեղեցւոյ Պուլկարիոյ եւ Ռումանիոյ Թեմերում, Գերշ. Տ. Գիսակ Եպս. Մու-րատեան՝ Առաջնորդական Տեղապահ Արժամքիմի եւ Գերշ. Տ. Վահան Եպս. Թօփալեան, Հոգեւոր Վերատեսուչը Յորդանմանի:

Հայ Եկեղեցւոյ Առաջնորդները եւ Իսրայէլի Նախագահը կարճ համդիպման ըմբացքին գրուցեցին Իսրայէլի կառավարութեան եւ Հայ Համայնքի միջեւ գոյութիւն ունեցող լաւ յարաբերութիւններուն մասին, եւ յուսալից էին որ այս յարաբերութիւնները, որոնք մշակուեցան 1988 թուականի երկրաշարժի հետեւանքով, հետզհետէ աւելի պիտի զարգանան ու աճին:

Ամեմ. Սրբազան Պատրիարք Հայրը մտահոգ էր մանւ Արաբ-Հրեայ կրօնական եւ քաղա-քական ծայրայեղութեանց համար եւ շեշտեց որ տարբեր գաղափարախօսութիւններու միջեւ պէտք է որ աւելի լայն բանակցութիւններ կատարուին եւ իրար հասկացողութեան պայ-մաններ ստեղծուին:

Նախագահ Զէրցօկմ ալ իր հերթին այն գաղափարը յայտնեց որ Ս. Երկրի տարբեր փոքրամասնութիւններու միջեւ աւելի սերտ եւ հաստատուն յարաբերութիւններ պէտք է որ գոյանան:

Յարգելի Նախագահը Հայկական ձեռագիրներու եւ ձեռագրաց արուեստի մասին իր խոր, անձնական հետաքրքրութիւնը յայտնեց:



Նախագահ

Թորգոմ Պատրիարք Մանուկեան կ'այցելէ Իսրայէլի
Հայիմ Հերժոկին (31 Հոկտ. 1980)